ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

09.07.2012թ.
175-ի 8

Կրթության եւ գիտության նախարար
պարոն Արմեն Աշոտյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աշոտյան,

Հայտնում ենք Ձեզ, որ Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրում մինչ օրս չի գործում ջեռուցման համակարգ, դպրոցը չունի առանձին կաթսայատուն, դպրոցական կահույքը շատ հին է, հարմարեցված չէ տարրական դասարանի երեխաների համար, դպրոցը, ներառյալ սանհանգույցները գտնվում են ոչ բարվոք վիճակում, ունեն վերանորոգման կարիք:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Նախատեսվու՞մ է արդյոք կառուցել ջեռուցման ընդհանուր համակարգ (կաթսայատուն) Հակոբ Կոջոյանի անվան հ. 15 կրթահամալիրում:
2. Եթե այո, ապա խնդրում ենք հայտնել, արդյոք 2012-2013 ուս տարում կգործի՞ կրթահամալիրի ջեռուցման ընդհանուր համակարգը (կաթսայատունը):
3. Նախատեսվու՞մ է արդյոք ԿԳՆ որեւէ ծրագրով կրթահամալիրի հին դպրոցական կահույքը (դպրոցական նստարաններ, պահարաններ, գրատախտակներ և այլն) փոխարինել նորով 2012-2013 ուս. տարում (այդ թվում՝ հին կահույքի փոխարինում նորով 1-ին դասարանցիների համար):
4. Նախատեսվու՞մ է արդյոք իրականացնել կրթահամալիրի դասասենյակների եւ սանհանգույցների վերանորոգում, այդ թվում՝ կոսմետիկ (պատերի ծեփապատում, սանհանգույցների սալիկապատում եւ այլն) 2012-2013 ուս. տարում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան